

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
70/09**

Քաղ. Երևան

15 սեպտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Բ.Շ.Վարդանյան, Ա.Վ.Բաբայան և Լ.Ե.Ասցատրյան (քարտուղար), իր 2009թ. սեպտեմբերի 15-ի նիստում (արձանագրություն 73/4) քննարկեց «Գրանդ Զենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ի 2009թ. հուլիսի 15-ի բողոքը (մտից հ.517, 15.07.09թ.)՝ «KTO CKA3AՄ MY XTO CKA3AB MY?» IR 966564 ապրանքաին նշանի գրանցումը անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են:

Բողոքարկողը բողոքում նշել է, որ 2008թ. հունիսի 2-ին Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը Ապրանքային նշանների միջազգային գրանցման մադրիդյան համաձայնագրի և դրա արձանագրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության վրա տարածել է Չակրիտոյե ակցիոներնոյե օբշչեստվո «ԱՎԿ» (ՍՊԸ) (այսուհետ նաև՝ ZAKRYTOE AKTIONERNOE OBSHESTVO "AVK" (ՍՊԸ)) ընկերության «KTO CKA3AՄ MY? XTO CKA3AB MY?» ապրանքային նշանի IR 966564 միջազգային գրանցումը ԱՃՄԴ 30-րդ դասի բոլոր հայտարկված ապրանքների համար:

Սակայն «Գրանդ Զենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև ընկերություն), որն հանդիսանում է նույն ԱՃՄԴ 30-րդ դասի ապրանքների համար գրանցված N 8710 «MY-MY» և N10820 «MY-Y-Y» բառային ապրանքային նշանների սեփականատերը, և այդ ապրանքային նշանները օգտագործում է քաղաքացիական շրջանառության մեջ ավելի քան հինգ տարի, համարում է, որ IR 966564 միջազգային գրանցումը խախտում է իր բացառիկ իրավունքները, քանի որ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 11-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի և 12-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ՝ կարգ) 15-րդ կետի 2-րդ ենթակետի, և 96-101-րդ կետերի համաձայն այն շփոթելու աստիճան սման է ընկերության անունով գրանցված «MY-MY» և «MY-Y-Y» նշաններին ձայնային, իմաստային և գրաֆիկական առումով, հետևապես ուկրաինական ընկերության «KTO

«КАЗАЛ МУ ХТО КАЗАВ МУ?» IR 966564 ապրանքային նշանի գրանցումը կարող է կեղծ կամ սպառողին մոլորության մեջ գցող տեղեկություններ պարունակել ապրանքի արտադրողի մասին:

Իր պնդումը հիմնավորելու համար բողոքարկողը համեմատում է իրենց և ուկրաինական ընկերությունների ապրանքային նշանները և գալիս այն եզրակացության, որ, չնայած «КТО КАЗАЛ МУ?» ապրանքային նշանը բառային արտահայտություն է, որը բաղկացած է երեք բառերից՝ «КТО»-ն՝ «КАЗАЛ»-ասաց, «МУ»-մու, սակայն, «КТО» և «КАЗАЛ» բառերը հիմնական ընկալման տարրեր չեն հանդիսանում և ինքնուրույն իմաստային նշանակություն չունեն, այն ինչ «МУ» բառը հանդիսանում է հիմնական ընկալման տարր, ունի ինքնուրույն նշանակություն և, ի տարբերություն մնացած երկու բառերի, կարող է տարբերակող հատկություն ունենալ: Նա նշել է նաև, որ «МУ» բառը խոսակցական լեզվում օգտագործվում է որպես կովի բառաչուն արտահայտող հնչյուն (բառ), և «МУ-МУ» և «МУ-У-У» բառային ապրանքային նշաններն էլ հենց դա են արտահայտում:

Բողոքարկողը կարևորում է այն հանգամանքը, որ համեմատվող նշաններն ունեն նաև իմաստային նմանություն, այն է՝ «МУ» հիմնական տարրի համընկնումը, որը հանդիսանում է նմանության առկայության որոշիչ գարծոն, ունի առանձին իմաստ և որի վրա է ընկնում տրամաբանական շեշտադրումը՝ IR 966564 միջազգային գրանցմամբ ապրանքային նշանի իմաստն է «ն՞վ բառաչեց», ընկերության նշաններինը՝ բառաչ:

Այսպիսով բողոքարկողը, ելնելով վերը շարադրվածից և առաջնորդվելով օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով, 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 2-րդ կետի 12-րդ ենթակետով, խնդրել է 2008թ. հունիսի 2-ին Ապրանքային նշանների միջազգային գրանցման մարիդիան համաձայնագրի և դրա արձանագրության շրջանակներում ՀՀ-ի վրա տարածված Չակրիտոյե ակցիոներնոյե օբջեեստվո «ԱՎԿ» (UA) ընկերության «КТО КАЗАЛ МУ ХТО КАЗАВ МУ?» ապրանքային նշանի N 966564 միջազգային գրանցման հիման վրա ՀՀ-ում իրավական պահպանության տրամադրումը ճանաչել անվավեր ԱԾՄԴ 30-րդ դասի բոլոր հայտարկված ապրանքների համար:

Բողոքարկման խորհուրդը «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 36-րդ կետի համաձայն 17.07.09թ. ծանուցել է «КТО КАЗАЛ МУ? ХТО КАЗАВ МУ?» IR 966564 ապրանքային նշանի սեփականատեր Չակրիտոյե ակցիոներնոյե օբջեեստվո «ԱՎԿ» (UA) ընկերությանը (ЗАО «АВК» ул. 1-ая Александровка, 9, Донецк, Украина) բողոքարկման խորհրդի կողմից 2009թ. հուլիսի 15-ին «Գրանդ Զենդի հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ի բողոքը քննարկման ընդունելու, նիստի անցկացման թվականի՝ 2009թ. սեպտեմբերի 15-ի, և բողոքի վերաբերյալ իր նկատառումները նիստի անցկացման օրվանից ոչ ուշ քան 10 օր առաջ ներկայացնելու մասին:

Ըստ համապատասխան փոստային ծանուցագրի հասցեատիրոջ կողմից ծանուցումն ստացվել է 27.07.09թ., իսկ 10.09.09թ. ՀՀ արտոնագրային հավատարմատար Է.Նահապետյանը, լիազորված լինելով Չակրիտոյե ակցիոներնոյե օբշչեստվո «ԱՎԿ» ընկերության կողմից, ներկայացրել է ընկերության պատասխան նամակը «Գրանդ Զենդի» հայ-կանադական ՀԶ ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ:

Չակրիտոյե ակցիոներնոյե օբշչեստվո «ԱՎԿ» ընկերությունը «Գրանդ Զենդի» ՍՊԸ-ի բերած փաստարկները համարում է ոչ համոզիչ, բերելով հետևյալ հիմնավորումները.

1. Քանի որ «Գրանդ Զենդի» ՀԶ ՍՊԸ-ի բողոքը հիմնված է իմաստային (սեմանտիկ) նմանության վրա, ապա «ԱՎԿ» ընկերության ներկայցուցիչը նպատակահարմար է գտնում սկսել նշանների նմանության վերլուծությունը հենց այդ հատկանիշից:

Չակրիտոյե ակցիոներնոյե օբշչեստվո «ԱՎԿ» ընկերության հայտարկված և «Գրանդ Զենդի» ՍՊԸ-ի հակադրված ապրանքային նշանների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք իրենց կազմում պարունակում են հնչյունաբանական տեսակետից նման տարրեր՝ «MY»/«MY-MY»/«MY-Y-Y». Սակայն նշված հանգամանքը չի վկայում համեմատվող նշանների ամբողջովին նմանության մասին: Տվյալ եզրակացությունը հիմնավորված է նրանով, որ «KTO CKA3AJI MY? XTO CKA3AB MY?» նշանը բաղկացած է երեք բառից, որոնք կազմում են տրամաբանորեն ավարտված հարց-արտահայտություն երկու լեզվով, որի կազմի մեջ բացի «MY» բառից, մտնում են ևս չորս բառ՝ «KTO», «CKA3AJI», «XTO» և «CKA3AB», և պետք է ուսումնասիրել այդ երեքական բառերը միասին, քանի որ դրանք իմաստային տեսակետից կապված են միմյանց հետ՝ ստեղծելով մեկ իմաստային հարց-արտահայտություն:

Բացի դրանից, Չակրիտոյե ակցիոներնոյե օբշչեստվո «ԱՎԿ» ընկերության ներկայացուցիչը շեշտում է այն փաստը, որ միջազգային գրանցմամբ ապրանքային նշանը կատարված է երկու լեզվով՝ ռուսերեն և ուկրաիներեն, ինչը ակնհայտորեն շեշտում է արտադրողի վայրը, այսինքն՝ Ուկրաինան, իսկ դա նշանակում է, որ սպառողը ոչ մի դեպքում չի շփոթի տեղական արտադրողի ապրանքային նշանը ուկրաիական արտադրողի ապրանքային նշանի հետ:

«ԱՎԿ» ընկերությունը կտրականապես համաձայն չէ բողոքում նշված այն փաստարկին, որ «...միջազգային ապրանքային նշանի տարրերից միայն «MY» բառը կարող է տարբերակիչ հատկություն ունենալ, քանի որ մնացած բառերի վրա չի ընկնում տրամաբանական շեշտադրում, «KTO» և «CKA3AJI» բառերը հիմնական ընկալման տարրեր չեն հանդիսանում և ինքնուրույն իմաստային նշանակություն չեն կարող ցուցաբերել հայտարկվող ապրանքային նշանում, այն ինչ «MY» բառը հանդիսանում հիմնական ընկալման տարր և ամբողջովին ցուցաբերում է ինքնուրույն նշանակություն», քանի որ իրականում ամեն ինչ հակառակն է: «MY» բառը հանդիսանում է թույլ տարր, քանի որ ոչ մի իմաստ չի արտահայտում, մինչև անգամ կովի բառացյուն: Իսկ իմաստային և տարբերակիչ մասը «KTO CKA3AJI...?» և «XTO CKA3AB...?» արտահայտությունն է, որն իր մեջ պարունակում է իմաստային հարց՝ «ո՞վ ասաց», անկախ «MY» թույլ տարրից, որի փոխարեն կարող է լինել ցանկացած բառ, օրինակ, «Мяг», «My» կամ «Гав», և այս ցանկը կարող է անվերջ

շարունակվել: Եվ այսպիսով, հիմնական իմաստային և տարբերակիչ տարրը «KTO CKA3AJ...?» և «XTO CKA3AB...?» արտահայտությունն է: Այդ կապակցությամբ նա նշում է, որ «Գրանդ Քենդի» ՅՁ ՄՊԸ-ի բողոքում նշված է նշանի միայն մի մասը՝ գրված ռուսերեն լեզվով, և անտեսված է երկրորդ մասը՝ ուկրաիներեն լեզվով, ինչը վկայում է այն մասին, որ բողոքարկողը դիտավորյալ դա չի նշել, քանի որ երկու լեզվով գրված հարց-արտահայտությունը էլ ավելի է գրավում սպառողի ուշադրությունը և նշանին տալիս տարբերակիչ հատկություն: Ինչ վերաբերում է «MY», «MY-MY», «MY-Y-Y» տարրերին, ապա «ԱՎԿ» ընկերության ներկայացուցիչը նշում է, որ «MY-MY» նշանը, դա Տուրգենևի հայտնի «MY-MY» ստեղծագործության շան անունն է, որը կովի հետ դժվար է շփոթել, իսկ «MY-Y-Y» նշանը չունի մարդու համար որևէ իմաստ և ընկալվում է որպես կովի բառացյուն (փաստորեն, որպես ձայնարկություն):

2. «ԱՎԿ» ընկերության ներկայացուցիչը համարում է, որ նշանների համեմատությունը ըստ ձայնային (հնչյունաբանական), ինչպես նաև ըստ գրաֆիկական (տեսողական) հատկանիշի, բերում է այն եզրակացության, որ այդ տեսակետներից էլ համեմատվող նշանների նմանությունը նույնպես բացակայում է, այսինքն, համեմատվող նշանները համեմատության բոլոր երեք հատկանիշներով նման չեն: Ներկայացուցչի կարծիքով, քանի որ վիճարկվող և հակադրվող ապրանքային նշանները շփոթության աստիճանի նման չեն միմյանց, ապա անիմաստ է դառնում ապրանքների նույնատիպության վերաբերյալ վերլուծությունը՝ պարզելու համար դրանց վաճառքի ժամանակ նույն իրավաբանականարտադրողի նկողմից պատկանթողարկվելու մասին հարցում սպառողի մոտ պատկերացում առաջանալու սկզբունքային հնարավորությունը :

Նա կարևորում է այն փաստը, որ չնայած «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՅՁ ՄՊԸ-ի անունով գրանցված N8710 «MY-MY» և N10820 «MY-Y-Y» ապրանքային նշանների առկայությանը, ՅՅ Մտավոր սեփականության գործալվալության փորձագետների կողմից որոշում է կայացվել «KTO CKA3AJ MY? XTO CKA3AB MY?» IR966564 ապրանքային նշանին պահպանություն ընձեռելու մասին, ինչը մեկ անգամ ևս հաստատում է Չակրիտոյե ակցիոներնոյե օբջչեստվո «ԱՎԿ» ընկերության դիրքորոշման ճշտությունը:

«ԱՎԿ» ընկերության ներկայացուցչի կարծիքով, որպես փաստարկ՝ հօգուտ Յայաստանում «KTO CKA3AJ MY? XTO CKA3AB MY?» IR966564 ապրանքային նշանի գրանցման, կարող են հանդիսանալ նաև այլ երկրների արտոնագրային գերատեսչությունների ընդունած դրական որոշումները, ընդ որում, մի քանի երկրներում միաժամանակ գոյություն ունի այլ սեփականատիրոջ անունով ավելի վաղ առաջնություն ունեցող «MY-MY» և «MY-Y-Y» ապրանքային նշանների գրանցումներ այլ սեփականատերերի անունով: Օրինակ, Ուկրաինայում «ԱՎԿ» ընկերության անունով գրանցված է «KTO CKA3AJ MY?» ապրանքային նշանը, վկայական N75910 (առաջնությունը՝ 13.01.2006թ.): Ընդ որում, գոյություն ունի ավելի վաղ առաջնություն ունեցող «MY-Y-Y» ապրանքային նշանի գրանցում այլ սեփականատիրոջ անունով՝ վկայական N49731(առաջնությունը՝ 02.06.2003թ.): Ղազախստանում «ԱՎԿ» ընկերության անունով

գրանցված է «KTO CKA3AЛ MY?» ապրանքային նշանը, վկայական N23226 (առաջնությունը՝ 27.12.2005թ.): Ընդ որում, գոյություն ունի ավելի վաղ առաջնություն ունեցող «MY-MY» ապրանքային նշանի գրանցում այլ սեփականատիրոջ անունով:

3. Չակրիտոյե ակցիոներնոյե օբջչեստվո «ԱՎԿ» ընկերության ներկայացուցիչը նպատակահարմար է համարում նշել, որ ընկերությունը հանդիսանում է հրուշակեղենի ազգային խոշոր արտադրողներից մեկը՝ որը հիմնադրվել է 1991թ. իսկ արտադրադրական գործունեությունը ծավալել է 1993թ.: Այսօր ընկերությունը տիրապետում է նորագույն արտադրական գծերին, ինչը հնարավորություն է տալիս արտադրել հրուշակեղենի լայն տեսականի, և դրանցից շատերի նմանը չկա ուկրաինական շուկայում: Ընկերությունը լայն ճանաչում ունի ոչ միայն իր երկրում, այլ նաև դրա սահմաններից դուրս, արտադրանքը ունի մեծ հեղինակություն սպառողի մոտ և շուկայում երկարատև առկայության, թողարկվող արտադրանքի բարձր որակի, որը հաստատվել է միջազգային վկայականներով և տարբեր աստիճանի դիպլոմներով (ինչպես միջազգային, այնպես էլ ռուսաստանյան) արդյունքում ձեռք է բերել տարբերակիչ հատկություն:

Ընկերությունը հիմնականում կենտրոնացած է բրենդային բարձրորակ, բարդ արտադրանքի վրա: Նրա հզորությունները թույլ են տալիս արտադրել մինչև 450 տոննա արտադրանք մեկ օրում: Ընկերությունն իր արտադրանքն արտահանում է աշխարհի 20 երկրներ, այդ թվում Չայաստան, ընդ որում, արտադրանքի բարձր որակի, ինչպես նաև արտադրության մեջ ժամանակակից ինտվացիոն տեխնոլոգիաների շնորհիվ, «ԱՎԿ» ընկերությունը անընդհատ ընդլայնում է իր արտադրանքի արտահանումը: Բացի դրանից, «Չակրիտոյե ակցիոներնոյե օբջչեստվո «ԱՎԿ» ընկերությունը առաջին և առաջմ միակն է հրուշակեղեն արտադրողների շրջանում, որի ապրանքային նշանը՝ Ուկրաինայի մտավոր սեփականության Պետական դեպարտամենտի Բողոքարկման պալատի 25.09.2008թ. որոշմամբ, ճանաչվել է հանրահայտ 2005 թվականից:

«ԱՎԿ» ընկերության տարբեր երկրներում գրանցված բրենդ դարձած ապրանքային նշանների փաթեթը ներառում է ավելի քան 720 պահպանագիր, որից 139 վկայական Ռուսաստանում, 360՝ Ուկրաինայում, 112՝ Ղազախստանում, 26՝ Մոլդովայում, 27՝ Ադրբեջանում, 16՝ Վրաստանում, 40 միջազգային վկայագրեր, ստացված Մադրիդյան համաձայնագրի շրջանակներում, որոնք ընգրկում են մերձավոր և հեռավոր արտասահմանի ավելի քան 20 երկրներ (այդ թվում նաև Չայաստանի Չանրապետությունը):

Այսպիսով, բերելով իր փաստարկները, Չակրիտոյե ակցիոներնոյե օբջչեստվո «ԱՎԿ» ընկերությունը խնդրել է մերժել 2009թ. հուլիսի 13-ի «Գրանդ Զենդի» հայ-կանադական ՅՁ ՍՊԸ-ի բողոքի բավարարումը և Չայաստանի Չանրապետությունում IR966564 միջազգային գրանցմամբ «KTO CKA3AЛ MY? XTO CKA3AB MY?» ապրանքային նշանին տրամադրված իրավական պահպանությունը թողնել ուժի մեջ՝ 30 դասի բոլոր հայտարկված ապրանքների համար:

Չակրիտոյե ակցիոներնոյե օբջչեստվո «ԱՎԿ» ընկերության նամակին կից ներկայացվել են.

1. Չակրիտոյե ակցիոներնոյե օբձէստվո «ԱՎԿ» ընկերության կողմից «ՆԱՅԱՊԵՏ և Կ, ՍՊԻ-ի անունով տրված լիազորագիրը

2. 2008-2009 (հուլիս)թ.թ. ընկերության կողմից Հայաստան ներկրած «KTO CKA3AՄ MY? XTO CKA3AB MY?» կոնֆետների քանակական և գումարային տվյալների մասին տեղեկանք.

4. «ԱՎԿ» ապրանքային նշանը հարահայտ ճանաչելու մասին Ուկրաինայի մտավոր սեփականության Պետական դեպարտամենտի Բողոքարկման պալատի 25.09.2008թ. որոշման պատճենը.

5. «ԱՎԿ» ընկերության IR 966564 միջազգային գրանցմամբ ապրանքային նշանը տարբեր երկրներում գրանցված լինելու մասին փաստաթղթերի պատճենները.

6. «ԱՎԿ» ընկերության «KTO CKA3AՄ MY? XTO CKA3AB MY?» ապրանքային նշանը տարբեր երկրներում ազգային ընթացակարգով գրանցված լինելու մասին փաստաթղթերի պատճենները:

2009թ. սեպտեմբերի 15-ին «Գրանդ Զենդի» հայ-կանադական ՀԶ ՍՊԸ-ն իր առարկություններն է ներկայացրել բողոքարկման խորհուրդ՝ «ԱՎԿ» ընկերության ներկայացուցչի գրության վերաբերյալ, որոնք նույնպես ուսումնասիրվել և հաշվի են առնվել կոլեգիայի կողմից բողոքի քննարկման ընթացքում: Մասնավորապես, առարկություններում նշված է, որ բողոքարկվող և գրանցված ապրանքային նշանների շփոթելու աստիճան սմանության հերքումն անհիմն է, քանի որ «Գրանդ Զենդի» հայ-կանադական ՀԶ ՍՊԸ-ն իր բողոքի մեջ հստակ ապացուցել է դրա առկայությունը: Ըստ բողոքարկողի, Չակրիտոյե ակցիոներնոյե օբձէստվո «ԱՎԿ» ընկերության վիճարկվող նշանը, որի փաթեթվածքի վրա պատկերված է կովի գլուխ, իր թեմատիկայով նույնպես նման է «Գրանդ Զենդի» հայ-կանադական ՀԶ ՍՊԸ-ի «MY-MY» կամ «MY-Y-Y» ապրանքային նշաններին:

Ներկայացված բողոքի քննարկման արդյունքում կոլեգիան պարզել է հետևյալը:

Կոլեգիան ուսումնասիրել է բողոքը և պարզել, որ բողոքի հիմքերում բերված են օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետը, 12-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև կարգի 15-րդ կետի 2-րդ ենթակետը և 96-101-րդ կետերը, որոնք, բողոքարկողի կարծիքով, ապացուցում են «Գրանդ Զենդի» ՀԶ ՍՊԸ-ի բացառիկ իրավունքների խախտումը:

Նշված հիմքերի տեսակետից ուսումնասիրելով բողոքի պահանջը, կոլեգիան գտնում է, որ բողոքարկողի պնդումն այն մասին, որ IR 966564 միջազգային գրանցումը խախտում է իր բացառիկ իրավունքները, և այդ կապակցությամբ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի մեջբերումը, այն է՝ « 3. Որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել նաև այն նշանները, որոնք հանդիսանում կամ պարունակում են՝ ա) կեղծ կամ սպառողին մոլորության մեջ գցող տեղեկություններ ապրանքի կամ արտադրողի մասին», չունի որևէ կապ բողոքարկվող նշանի «KTO CKA3AՄ MY XTO CKA3AB MY?» բովանդակության հետ, քանի որ բողոքարկվող նշանը իրենից ներկայացնում է որոշակի իմաստ ունեցող արտահայտություն, հետևաբար կարելի է ենթադրել որ բողոքում պարզապես սխալ հղում է կատարվել: Ինչ վերաբերում է բողոքարկողի կողմից օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի և կարգի 96-101-րդ կետերի մեջբերմանը, ապա իրոք, «Գրանդ Զենդի» ՀԶ ՍՊԸ-ի անունով գրանցված են ավելի վաղ առաջնությամբ «MY-MY» և «MY-Y-Y» բառային ապրանքային նշաններ, և այդ նշաններին

բողոքարկվող նշանի շփոթելու աստիճանի նման լինելը պարզելու համար կոլեգիան, հաշվի առնելով, որ բողոքարկվող նշանը արտահայտություն է, նպատակահարմար է գտել անդրադառնալ կարգի 98-րդ կետին: Սակայն այդ կետի համաձայն նշանների նմանությունը որոշվում է դրանցից մեկը մյուսի մեջ մտնելով, միևնույն «MY-MY» (5 սիմվոլ) և «MY-Y-Y» (6 սիմվոլ) պարունակող նշանները ամբողջությամբ չեն ներառված «KTO CKA3AՄ MY? XTO CKA3AB MY?» արտահայտության մեջ, ուստի սովյալ դեպքում կոլեգիան որևէ հիմք չի տեսնում նշանները համեմատելու և դրանց նմանության հարցը քննարկելու: Հետևապես, կոլեգիայի նախնական եզրակացությունը այն է, որ բողոքը պետք է մերժվի:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում և բողոքարկման խորհրդի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

1. «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված է՝

«1. Ապրանքային նշանի գրանցումը կամ նշանի միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանության տրամադրումը կարող է վիճարկվել և ճանաչվել անվավեր՝

ա) ամբողջովին կամ մասնակիորեն՝ իրավական պահպանության ամբողջ ժամկետի ընթացքում, եթե այն տրամադրվել է սույն օրենքի 11 հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ կամ ապրանքային նշանին իրավական պահպանության տրամադրման մասին տեղեկությունների պաշտոնական հրապարակման օրվանից 5 տարվա ընթացքում, եթե իրավական պահպանությունը տրամադրվել է սույն օրենքի 12 հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ»:

«3. Սույն հոդվածի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված ժամկետներում և հիմքերով բողոքը բողոքարկման խորհուրդ կարող է ներկայացնել ցանկացած անձ»:

Ուստի «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀԶ ՍՊԸ-ն, օգտվելով օրենքով իրեն ընձեռված հնարավորությունից, իավունք ուներ բողոք ներկայացնելու բողոքարկման խորհուրդ:

2. Բողոքարկման խորհուրդը համարում է, որ բողոքարկողի պնդումն այն մասին, որ IR 966564 միջազգային գրանցումը խախտում է իր բացառիկ իրավունքները և այդ կապակցությամբ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի մեջբերումը, վերաբերելի չեն քննարկվող հարցին, քանի որ «KTO CKA3AՄ MY XTO CKA3AB MY?» արտահայտությունը «չի հանդիսանում կամ պարունակում ա) կեղծ կամ սպառնողին մոլորության մեջ գցող տեղեկություններ ապրանքի կամ արտադրողի մասին», հետևապես կարելի ընդունել կոլեգիայի կողմից արված եզրակացությանը և համաձայնվել, որ բողոքում պարզապես սխալ հղում է կատարվել:

3. Համաձայն Օրենքի 12 հոդվածի 1 կետի՝ «...Որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճանի նման են նույն կամ նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում այլ անձի անունով արդեն գրանցված կամ գրանցման ներկայացված (եթե դրանց հայտերը հետ կանչված կամ մերժված չեն) ավելի վաղ

առաջնությամբ ապրանքային նշանին կամ Հայաստանի Հանրապետությունում պահպանվող, այդ թվում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, նույն կամ նույնատիպ ապրանքների համար ավելի վաղ առաջնությամբ այլ անձանց ապրանքային նշաններին»:

Իրոք, «Գրանդ Քենդի» ՀԶ ՍՊԸ-ի անունով գրանցված են ավելի վաղ առաջնությամբ «MY-MY» և «MY-Y-Y» բառային ապրանքային նշաններ, և բողոքարկվող նշանի այդ նշաններին շփոթելու աստիճանի նման լինելը պարզելու համար փորձաքննությունը առաջնորդվել է կարգի 97-րդ կետով. «Բառային նշանների նմանությունը կարող է լինել ձայնային (հնչյունային), գրաֆիկական (տեսողական) և իմաստային (միտքարտահայտածող մտքի)»:

Կարգի 98-րդ կետի համաձայն ձայնային նմանությունը որոշվում է մի շարք հատկանիշներով, այդ թվում, 10-րդ ենթակետից ելնելով, «նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով, հատկապես բառային արտահայտությունների» սակայն տվյալ դեպքում «MY-MY» (5 սիմվոլ) և «MY-Y-Y» (6 սիմվոլ) պարունակող նշանները ամբողջությամբ չեն ներառված «KTO CKA3AJI MY? XTO CKA3AB MY?» բառային արտահայտության մեջ, հետևապես, բողոքարկման խորհուրդը համարում է, որ այդ առումով եթե նույնիսկ ընդունենք, որ վիճարկվող և գրանցված գրանցված նշաններն ունեն ընդհանուր տարր, այն է՝ «MY» բառը, ապա տվյալ դեպքում ձայնային նմանության առումով դա որևէ նշանակություն ունենալ չի կարող, քանի որ այդ նշանների տարբեր ձևով արտասանության հանգամանքն ակնհայտ է, ուստի նմանության քննարկումը անհիմն է և որևէ իմաստ չունի:

Համեմատելով նշանները գրաֆիկական նմանության տեսակետից, բողոքարկման խորհուրդը եկել է այն եզրակացության, որ ոչ ընդհանուր տեսողական տպավորությամբ, ոչ էլ կարգի 99-րդ կետում թվարկած այլ չափանիշներով, փորձաքննությունը ևս հիմքեր չունեք այդ նշանները շփոթելու աստիճան նման համարելու:

Ինչ վերաբերում է նշանների իմաստային նմանությանը, ապա բողոքարկման խորհուրդը, չնայած ընդունում է, որ համեմատվող նշաններում առկա է «MY» տառակապակցությունը, որը, ինչ խոսք, կապ ունի համապատասխան պերսոնաժի հետ, սակայն չի համապատասխանում կարգի 100-րդ կետի պահանջներով սահմանված իմաստային նմանությունը որոշելու հատկանիշներին, այն է՝

«1) նշանների մեջ դրված նման հասկացության, գաղափարի, մասնավորապես տարբեր լեզուներով նշանների համընկնող իմաստի.

2) նշանների տարրերից որևէ համընկնող տարրի, որն առանձին իմաստ ունի և որի վրա ընկնում է տրամաբանական շեշտադրումը, որը որ գոյություն ունի»:

Տվյալ դեպքում համեմատվող նշաններում առկա չեն նման իմաստ ունեցող տարր կամ տարրեր, որոնք կրում են տրամաբանական շեշտադրումը, մասնավորապես, մի դեպքում «MY-MY»-ն դա հայտնի ստեղծագործության պերսոնաժ է և ոչ մի կապ չունի «MY-Y-Y» նշանի հետ, որն իմաստավորում է կովի բառաչ: Մյուս դեպքում «KTO CKA3AJI MY? XTO CKA3AB MY?» դասավորվածությունը չի կրում վերը նշված իմաստներից և ոչ մեկը: Ավելի շուտ այն հիշեցնում է «KTO CKA3AJI MЯY?» ստեղծագործությունը, որի իմաստային նշանակությունն է՝ ինչ որ մեկն է, որը տվյալ դեպքում «ասաց «MY»:

Յետևաբար բողոքարկման խորհուրդը համարում է, որ բողոքարկողի պնդումը որ համեմատվող նշանները իմաստային առումով շփոթելու աստիճան նման են, անհիմն է և չի կարող ընդունվել:

Բացի դրանից, բողոքարկման խորհուրդը, ելնելով բողոքի հիմնական պահանջի ձևակերպումից, համարել է, որ ապրանքային նշանի շուկայում օգտագործման ձևը (գովազդը, փաթեթավորումը, շուկայում գրաված դիրքը և այլն) չի կարող քննության առարկա հանդիսանալ, քանի որ չի վերաբերում քննարկվող հարցին. բողոքի քննարկման ընթացքում համեմատվել են գրանցումները, այլ որ թե նշանների օգտագործման ձևերը: Իսկ եթե կողմերից մեկը փորձել է նշանը օգտագործել այն ձևով, որը խախտում է մյուսի իրավունքները կամ շփոթություն է առաջացնում, ապա դա արդեն կվերաբերի իրավունքների խախտմանը կամ անբարեխիղճ մրցակցությանը, և նման հարցերը պետք է քննարկվեն այդ տեսանկյունից:

Այսպիսով, բողոքարկման խորհուրդը համարում է որ «KTO CKA3AJI MY? XTO CKA3AB MY?» IR 966564 միջազգային գրանցմամբ ապրանքային նշանը գրանցելու մասին փորձաքննության որոշումը կատարվել է օրենքի պահանջների սահմաններում:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 74-րդ կետի 2-րդ ենթակետով Բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Գրանդ Զենդի» հայ-կանադական ՀԶ ՍՊԸ-ի 2009թ. հուլիսի 15-ի բողոքը ամբողջովին և «KTO CKA3AJI MY XTO CKA3AB MY?» IR 966564 միջազգային գրանցմամբ ապրանքային նշանին իրավական պահպանության տրամադրումն թողնել ուժի մեջ՝ 30 դասի բոլոր հայտարկված ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն վիճարկվել դատական կարգով՝ այդ որոշումն ընդունելու օրվանից 6-ամսյա ժամկետում:

Բողոքարկման խորհրդի

Նախագահ

Ա.Ազիզյան